

Պատմության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքին, լավ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև սկսեք աշխատանքը:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60:

Թեստի աշխատանքի համար տրամադրվում է 5 ժամ:

Մաղթում ենք հաջողություն



Հրահանգ №1-24 առաջադրանքների համար: Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրած պատասխանը նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք X նշանը և այնուհետև նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

1. Ո՞րն է քորոնիկոն անվամբ հայտնի թվականության համակարգի հիմքերից մեկը:


ա) հին Հրեական օրացույցը,

ծ) 780-ամյա ցիկլը,

ճ) Հռոմեական օրացույցը,

զ) 532-ամյա ցիկլը:

2. Ո՞ր գիտական է ուսումնասիրում նկարում պատկերված պատմական աղբյուրը:



- ա) օնոմաստիկան,
- բ) էպիգրաֆիկան,
- գ) հերալդիկան,
- դ) վերսիլոլոգիան:

3. Ո՞ր դատողությունն է ճիշտ կոնֆուցիականության մասին:

- ս) Կոնֆուցիականությունը փիլիսոփայական ուսմունքի մի տեսակ է, որն առաջացել է Չինաստանում մ.թ.ա. VI-V դարերում,
- ծ) Կոնֆուցիականությունն առաջին մոնոթեիստական կրոնն է, որը հիմնադրվել է Չինաստանում հին և նոր թվարկությունների սահմանագծում,
- ճ) Կոնֆուցիականությունը մ.թ.ա. IV-III դարերում Չինաստանի պաշտոնական գաղափարախոսությունն էր, որն ընդունում էր կայսրի աստվածայնությունը,
- դ) Կոնֆուցիականությունն անվամբ հայտնի մարտիկների բարոյագիտության օրենսգիրքը Չինաստանում տարածել են ճապոնացի քահանաները:

4. Ո՞ր երկրի հասարակությունն էր բաժանվում վարնաների:

- ա) Բաբելոնի,
- ծ) Ճապոնիայի,
- ճ) Հնդկաստանի,
- զ) Պարսկաստանի:

5. Ի՞նչ արդյունքով ավարտվեց Քաղեջի ճակատամարտը:

- Տ) Եզիպտացիները դաժան պարտության մատնեցին իսթերիին և հաստատվեցին Սիրիա-Պաղեստինում,
- Ծ) Խեթերի բանակը կարողացավ պարտության մատնել եզիպտացիներին և վտարեց նրանց Սիրիայից,
- Ը) Ցայտուն հաջողության ոչ ոք չհասավ և եզիպտացիների ու իսթերի միջև կնքվեց զինադադար,
- Թ) Պարսիկների բանակի հայտնվելով և՛ եզիպտացիները, և՛ իսթերը ստիպված եղան նահանջել:

6. Հին Արևելքի ո՞ր քաղաքի դարպասներից մեկն է պատկերված լուսանկարում:



- ա) Ալեքսանդրիայի,
- բ) Բաբելոնի,
- գ) Մեմֆիսի,
- դ) Պերսեպոլիսի:

7. Ո՞ր վրացական նարատիվ աղբյուրում է պահպանված վրացիների ծագման մասին տեղեկություններից մեկը:

Տ) «Պատմություն Քարթլիի» («Ամբավի Քարթլիսանի»),

Ծ) «Արձան նահապետաց» («Ձեզլի էրիսթավթա»),

Ը) «Քարթլիի քրիստոնեացումը» («Մոքցեվայի քարթլիսայի»),

Թ) «Հարյուրամյա մատյան» («Ասծլովանի մատիանե»):

8. Ո՞վ էր մ.թ.ա. V դարում Աթենքում գործող Տիդիասը:

- ա) դրամատուրգ,
- բ) քանդակագործ,
- գ) քաղաքական գործիչ,
- դ) փիլիսոփա:

9. Ո՞ւմ միջև հակադրությամբ է սկսվել քաղաքացիական պատերազմների դարաշրջանը Հռոմեական Հանրապետությունում:

- ա) Մարիոսի և Սուլլայի,
- բ) Սերտորիոսի և Կրասոսի,
- գ) Պոմպեոսի և Լուկուլլոսի,
- դ) Օկտավիոսի և Անտոնիոսի:

10. Ո՞րն էր Հադրիանոսի պատի դերը անտիկ դարաշրջանում:

- ա) Պաշտպանում էր Հռոմեական կայսրության տիրույթները Դունայից դեպի հյուսիս բնակվող քոչվոր ցեղերի ներխուժումից,
- ծ) Փակում էր Ալպերի և Ադրիական ծովի միջև գտնվող առափնյա նեղ գիծը թշնամու անսպասելի հարձակումներից,
- ց) Պարսպում էր քաղաք Հռոմը և երկար ժամանակ ապահովում մայրաքաղաքի անվտանգությունը,
- Պաշտպանում էր հռոմեական գավառ Բրիտանիան հյուսիսում բնակվող ժողովուրդների հարձակումներից:

11. Ե՞րբ են առաջին անգամ կիրառել «Հունական կրակը»:

- ա) Բյուզանդա-պարսկական պատերազմի ժամանակ,
- բ) Նորմանների հարձակումների ժամանակ,
- գ) Արաբների կողմից Կոստանդնուպոլիսը պաշարելու ժամանակ,
- դ) Նիկեա քաղաքի վրա թուրք-սելջուկների հարձակման ժամանակ:

12. Ինչպե՞ս է կոչվում ֆրանկների կայսրությունում IX դարասկզբին սկսված կրթամշակութային վերելքը:

ա) Կարոլինգյան վերածնունդ,

ծ) Եվրոպական զարթոնք,

ճ) Վաղ հումանիզմ,

դ) Մերովինգյան ռեֆորմացիա:

13. Ո՞ւմ հպատակն էր Վիլհելմ Նվաճողը, ով 1066 թվականին նվաճեց Անգլիան:

- ա) Սրբազան Հռոմեական կայսրության կայսրի,
- բ) Ֆրանկների կայսրի,
- գ) Իսպանիայի թագավորի,
- դ) Ֆրանսիայի թագավորի:

14. Ինչպե՞ս էին կոչվում վաճառականների միությունները Միջնադարի եվրոպական քաղաքներում:

ա) Ունիա,

ծ) Գիլդիա,

ճ) Միաբանություն,

զ) Համքար:

15. Այլ հարցերի հետ մեկտեղ, ի՞նչ մտադրություն ուներ Դավիթ Շինարարը, երբ մեկնեց Հյուսիսային Կովկաս և օտերից վերցրեց պատանդներ:

- ա) Դադարեցնել քոչվորների ավերիչ հարձակումները Վրաստանի վրա,
- ծ) Ղփչաղների համար անվտանգ ճանապարհ ապահովել դեպի Վրաստան,
- ց) Օգտագործել ալանների վարձու զորքը խալիֆի դեմ պայքարում,
- Պ) Իրականացնել քրիստոնեություն ընդունելու օտերի խոստումը:

16. Այլ պատճառների հետ մեկտեղ, ի՞նչը դարձավ հարյուրամյա պատերազմը սկսելու առիթ:

- ա) Ֆրանսիայի թագավորի կողմից Նորմանդիայի դքսության հպատակեցնելը,
- բ) Ֆրանսիայի գահը զբաղեցնելու Անգլիայի թագավորի հավակնությունը,
- գ) Անգլիայի նավերի համար նավահանգիստները փակելու Ֆրանսիայի փորձը,
- դ) Հարսբուրգների հետ կռաւիցիա ստեղծելու Անգլիայի ձգտումը:

17. Ո՞րն էր «Անհաղթ Արմադայի» նպատակը:

- ա) Պարտության մատնել Անգլիան,
- բ) Կանխել օսմանցիների հարձակումները,
- գ) Ոչնչացնել Պորտուգալիայի նավատորմը,
- դ) Իրականացնել Ֆրանսիայի ծովային շրջափակում:

18. Այլ պատճառների հետ մեկտեղ, իսպանացի հաբսբուրգների համար ինչո՞ւ էր կարևոր տիրանալ Նիդեռլանդներին:

- ս) Ափամերձ տարածքում գտնվող նրա բերդ-ամրոցները վերահսկում էին Լա-Մանշի նեղուցը,
- ծ) Այստեղ գտնվում էին թանկարժեք մետաղներով հարուստ հանքեր,
- ց) Հանդիսանում էր պլացդարմ Սրբազան Հռոմեական Կայսրության դեմ,
- Պ) Այն հարուստ գավառ էր և մեծ եկամուտ էր ապահովում գանձարանի համար:

19. Այլ պատճառների հետ մեկտեղ, ի՞նչը նպաստեց բացարձակ միապետության ճգնաժամին Ֆրանսիայում:

- Տ) Կարդինալ Մազարինիի կառավարումը,
- Ծ) Լուսավորիչների գործունեությունը,
- Ճ) Ժակերիա կոչված գյուղացիական պատերազմը,
- Թ) Գլխավոր նահանգների հիմնումը:

20. Ո՞րն էր առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իրականացրած Գալիպոլի ռազմական գործողության նպատակը:

ս) Գերմանիայի և ավստրո-հունգարական զորամասերի կողմից գրավել Բելգիան և հյուսիսից հարձակվել Ֆրանսիայի վրա,

ծ) Դաշնակից անգլիացիների հզոր դեսանտ իջեցնել Ֆրանսիայում և ետ մղել գերմանացիների հարձակումը Փարիզի վրա,

զ) Անգլիայի և Ֆրանսիայի դեսանտային զորքերի կողմից բացել Դարդանելի նեղուցը դաշնակիցների ռազմանավերի համար,

զ) Ռուսաստանի զորքի կողմից գրավել Անատոլիան և ստեղծել պլացդարմ՝ Անկարան գրոհելու համար:

21. Ո՞ր դատողությունն է ճիշտ 1920 թվականին երկրորդ ինտերնացիոնալի պատվիրակության Վրաստան կատարած այցի հետ կապված:

- ա) Խորհրդային Ռուսաստանի կողմից Ադրբեջանի Հանրապետությունը նվաճելու և Վրաստանը բռնազավթելու փորձից ելնելով ինտերնացիոնալը ստեղծեց հանձնաժողով, որը պետք է նպաստեր զինադադար կնքելուն,
- բ) Նախքան Վրաստանը ազգերի լիգա ընդունելը եվրոպացի սոցիալիստները, որոնց մի մասը ազգերի լիգայի պատվիրակներ էին, որոշեցին առավելագույնս ծանոթանալ Հարավային Կովկասում տիրող իրավիճակին և ուղարկեցին ներկայացուցիչներ,
- գ) Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կառավարությունը ինտերնացիոնալին խնդրեց օգնել սահմանադրությունը մշակելու հարցում և Վրաստան ժամանած պատվիրակության անդամները խորհրդատվություն էին տրամադրելու հենց այս հարցի հետ կապված,
- դ) Վրաստանն առաջին պետությունն էր Եվրոպայում, որտեղ իշխանության գլուխ կանգնեցին սոցիալիստները և եվրոպացի սոցիալիստների այցն իրենց աջակցությունն արտահայտելու և ծանոթանալու բնույթ էր կրում:

22. Այլ պատճառների հետ մեկտեղ, ի՞նչը պայմանավորեց Խորհրդային իշխանության կողմից կաթողիկոս-պատրիարք Ամբրոսի Խելախայի ձերբակալումը:

- ա) Կաթողիկոս-պատրիարքի կողմից Ջենովայի միջազգային կոնֆերանս նամակ ուղարկելը, որտեղ նա պահանջում էր Վրաստանից հանել Կարմիր բանակի զորամասերը և անցկացնել ազատ ընտրություններ,
- բ) Քահանայությունների ակտիվ մասնակցությունը հակախորհրդային ապստամբության նախապատրաստմանը և այդ գործում կաթողիկոս-պատրիարքի ակտիվ աջակցությունը,
- գ) Կաթողիկոս-պատրիարքի նախաձեռնությամբ արտակարգ եկեղեցական ժողով հրավիրելը, որտեղ անիծեցին կոմունիստներին և կոչ արեցին ծխականներին պայքարել նրանց դեմ,
- դ) Սինոդի որոշումը, որի համաձայն եկեղեցական գանձերի մի մասը ուղարկեցին արտասահման, իսկ մյուս մասը պահեցին վանքերում:

23. Ի՞նչ գաղափար է կրում ներկայացված պաստառը:



- ա) Ստալինն ու Հիտլերը միևնույն քաղաքական գաղափարախոսության դեմքեր են,
- բ) ԽՍՀՄ-ն ու Երրորդ Ռայխը համատեղ պայքարում էին Անտանտայի դեմ,
- գ) Ե՛վ կոմունիզմը, և՛ նացիզմը ամբողջատիրական (տոտալիտար) վարչակարգեր են,
- դ) Արևմուտքն ու Արևելքը իրար հակադրված քաղաքակրթություններ են:

24. Ի՞նչ ձեռնարկեց ԱՄՆ-ն Կուբայում խորհրդային հրթիռներ հայտնաբերելուց հետո:

- ա) Ռազմանավերով իրականացրեց Կուբայի ծովային շրջափակում,
- բ) Խզեց ԽՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունները,
- գ) Հրթիռներ տեղադրեց Հունաստանում և Թուրքիայում,
- դ) Փորձեց կազմակերպել հեղաշրջում Կուբայում:

Հրահանգ №25-28 առաջադրանքների համար

Ժամանակագրական առումով դասավորեք պատմական իրադարձությունները կամ անձանց: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա հատկացված վանդակներում: Նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն անվանած իրադարձության կամ անձի համապատասխան թվանշանը: Առաջին վանդակում գրվում է այն թվանշանը, որով նշված է բոլորից վաղ տեղի ունեցած իրադարձությունը և այլն, համապատասխանաբար, վերջին երրորդ վանդակում կգրվի այն թվանշանը, որով նշված է բոլորից ուշ տեղի ունեցած իրադարձությունը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

25. Ժամանակագրական առումով դասավորեք պապության պատմության մեջ զարգացած իրադարձությունները.

1. Հակադրությունը Գրիգոր VII-ի և կայսրի միջև
2. Ֆիլիպ IV-ի կողմից Պապի աթոռանիստի տեղափոխումը Ավինյոն
3. Սուրբ Հռոն ազատագրելու Ուրբան II-ի կոչը

26. Ժամանակագրական առումով դասավորեք մոնոլոլների նվաճումների հետ կապված իրադարձությունները.

1. Լեհաստան և Հունգարիա կատարած արշավանքը
2. Խորեզմի նվաճումը
3. Ճակատամարտերը եգիպտական մամլուքների դեմ

27. Ժամանակագրական առումով դասավորեք աշխատությունները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի.

1. Սոլոմոն Դոդաշվիլի «Տրամաբանությունը»
2. Վախթանգ VI -ի «Գիրգ ձեթերի միախառնման և քիմիայի ստեղծման»
3. Յակոբ Գոգեբաշվիլի «Բունեբիս կարին» («Բնության դարպասը»)

28. Ժամանակագրական առումով դասավորեք այսօր գոյություն ունեցող ճարտարապետական հուշարձանները՝ ըստ դրանց կառուցման ժամանակի.


1. Բատոնի ամրոցը Թելավիում
2. Դադիանիների պալատը Ջուզդիդիում
3. Դարեջան թագուհու պալատը Թբիլիսիում

Հրահանգ №29 առաջադրանքի համար:

Աշակերտին տրվեց քարտեզ: Սեփական գիտելիքի և քարտեզի վրա առկա տեղեկատվության միջոցով նա պետք է պատասխաներ տրված հարցերին: Աշակերտի տրված պատասխաններից երկուսը (2) սխալ են պարունակում: Դուք պետք է գտնեք սխալները, արտագրեք դրանք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում և նույն տեղում ավելացնեք ճիշտ պատասխանները: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 2:

Առաջադրանք 29: Քարտեզն ու հարցերը տես հաջորդ էջերում





საქართველო უნდა გაერთიანდეს

Աշակերտին ուղղած հարցերը.

29.1. Տրված քարտեզի վրա n° ր պետության տարածքում են տեղի ունենում ռազմական գործողություններ:

29.2. Ըստ քարտեզի n° ր պետություններն են իրականացրել ռազմական ագրեսիա:

29.3. Ըստ քարտեզի, n° ր պետությունն է առաջին անգամ իրականացրել ռազմական ագրեսիա: Անպայման բացատրեք, թե քարտեզի վրա առկա n° ր տեղեկատվության հիման վրա եք հանգել նման եզրակացության:

29.4. Ո՞ր պետությունն է պարտվել քարտեզի վրա պատկերված ռազմական գործողություններում: Անպայման բացատրեք, թե քարտեզի վրա առկա n° ր տեղեկատվության հիման վրա եք հանգել նման եզրակացության:

29.5. Ըստ քարտեզի, n° ր պետությունները չէին մասնակցում ռազմական գործողություններին:

Աշակերտի տված պատասխանները.

29.1. Լեհաստանի:

29.2. Նացիստական Գերմանիան և Խորհրդային Ռուսաստանը:

29.3. Նացիստական Գերմանիան, որն ըստ քարտեզի լեգենդի (պայմանական նշաններ), ռազմական ագրեսիան սկսել է սեպտեմբերի 1-ին:

29.4. Լեհաստանը, որը կորցրեց տարածքի մի մասը:

29.5. Լիտվան և Սլովակիան:

Հրահանգ № 30 առաջադրանքի համար: Ուշադիր վերլուծեք նկարում տրված տեղեկատվությունը և պատասխանեք տրված հարցերին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 7:

Առաջադրանք 30: Նկարներն ու հարցերը տես հաջորդ էջերում



Առաջադրանք 30



N1



N2



N3

Նկարներում պատկերված է եվրոպական պետություններից մեկում XVIII դարավերջին զարգացած գործընթացի երեք դրվագ:

հարցերը տես հաջորդ էջում

Հարցեր.

(2) **30.1.** Ո՞ր նկարն է (գրեք նկարի համարը) արտացոլում այն պատճառներից մեկը, որը պայմանավորեց նկարներում պատկերված պատմական գործընթացի մեկնարկը և ըստ նկարի ո՞րն էր այդ պատճառը:

(2) **30.2.** Ո՞ր նկարն է (գրեք նկարի համարը) արտացոլում պատմական գործընթացի ներկայացված դրվագներից երկրորդը և ըստ նկարի ո՞րն էր այդ փուլի կարևորագույն առանձնահատկությունը:

(2) **30.3.** Ո՞ր նկարն է (գրեք նկարի համարը) արտացոլում ներկայացված դրվագներից ամենավերջին իրադարձությունը: Ձեր պատասխանը հիմնավորեք նկարի վրա տրված տեղեկության համաձայն:

(1) **30.4.** Անվանեք մեկ կոնկրետ դասի թեմայի վերնագիր, որի ընթացքում կօգտագործեիք բոլոր երեք նկարները:

Հրահանգ № 31 առաջադրանքի համար:

Ուշադիր կարդացեք ստորև բերված պատմական փաստաթուղթը, ըմբռնեք տեքստը և պատասխանեք հարցերին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 19:

Առաջադրանք 31: Պատմական փաստաթուղթն ու հարցերը տես հաջորդ էջերում



**Ասպետական արժանապատվության օրենսգիրք
(Ֆրանսիական պոեմ՝ ըստ «Ասպետության կանոններ»-
ի)**

Ասպետական արժանապատվության օրենսգիրքը պարտադիր է ասպետ համարվող բոլոր ազնվական ծագում ունեցող անձանց համար:

Ասպետական արժանապատվության օրենսգիրքը խախտելու դեպքում ասպետի ճակատագիրը որոշում է Սենյորը, որի վասալն է համարվում ասպետը:

Սենյորի կամքը չկատարելու դեպքում ասպետն անմիջապես զրկվում է ազնվականի տիտղոսից, բոլոր հողերից և արտոնություններից:

Յուրաքանչյուր ասպետ սեփական կյանքի գնով պետք է պաշտպանի իր Սյուզերենի կյանքը:

Անցում հարցերին. [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#)

Յուրաքանչյուր ասպետ պետք է կատարի իր տված խոստումը:

Յուրաքանչյուր ասպետ պետք է ունենա հավատարմագիր, որը հաստատում է նրա ազնվական ծագումը:

Յուրաքանչյուր ասպետ պետք է մասնակցի զինամարտերին, որտեղ կդրսևորի իրեն:

Ասպետը չունի անզեն մարդուն վնաս պատճառելու իրավունք:

Ասպետը չունի իր համեմատ ավելի պակաս զինված մարդուն վնաս պատճառելու իրավունք (եթե դա տեղի չի ունենում մարտի դաշտում:)

Թույլերի նկատմամբ ասպետը պետք է լինի բարի և ներողամիտ և օգնի նրանց, ովքեր օգնություն են խնդրում:

Տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում

Ասպետը պետք է լինի անողոք ինչպես սեփական և Սյուզերենի թշնամիների, այնպես էլ այն մարդկանց նկատմամբ, ովքեր վնաս և չարություն են պատճառում այլոց:

Ասպետը բարեկիրթ վերաբերմունք պետք է դրսևորի ազնվական կանանց նկատմամբ:

Եթե ասպետների միջև տեղի է ունենում տարաձայնություն և մեկը մյուսին վիրավորանք է պատճառում խոսքով կամ արարքով, ապա վիրավորված կողմն իր արժանապատվությունը պաշտպանելու նպատակով, իրավունք ունի վիրավորողին հրավիրել վկաների ներկայությամբ մենամարտի, կամ վիրավորողը ստիպված է հետ վերցնել իր խոսքերը և ներողություն խնդրել կատարած արարքի համար:

Անցում հարցերին. [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#)

Ասպետական զինամարտի ընթացքում արգելվում է կիրառել անպատշաճ հնարքներ:

Ասպետների համար ամենանողկալի արարքը դավաճանությունն է:

Արժանի պայքարում ասպետն իրավունք չունի հարվածել գետնին ընկած կամ գրություն հայցող հակառակորդին:

Ասպետը անողոքաբար պետք է պատժի Սյուզերենի, տիկնոջ և սեփական արժանապատվությունը նվաստացնողին:

Այս վարքի կանոնները խախտողի համար ասպետական արժանապատվության օրենսգրքի չիմացությունը չի համարվում մեղքը մեղմացնող հանգամանք:

Հարցերը տես հաջորդ էջերում

Հարցեր.

(1) **31.1.** Ըստ օրենսգրքի տեքստի, նշեք երկու փոխկապակցված պայման, որոնք անպայման պետք է բավարարեր անձը, ասպետ համարվելու համար:

(1) **31.2.** Ըստ օրենսգրքի տեքստի, ամբողջությամբ թվարկեք, թե ի՞նչ էր սպառնում ասպետին Սյուզերենի կամքը չկատարելու դեպքում:

(1) **31.3.** Ձեր կարծիքով, ի՞նչ նշանակություն ունեւր ասպետի համար զինամարտերին մասնակցելը, սեփական անձը դրսևորելուց բացի:

(1) **31.4.** Նշեք մեկ կոնկրետ պատճառ, որը պայմանավորեց ասպետության ծագումը Արևմտյան Եվրոպայում:

Անցնել փաստաթղթի տեքստի [1-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [2-րդ էջին](#)

- (2) **31.5.** Ո՞ր հարցի հետ կապված է օրենսգիրքը նախատեսում բացառություն և Ձեր կարծիքով ինչո՞ւ:
- (2) **31.6.** Ըստ փաստաթղթի, ի՞նչ տեղի կունենար, եթե ասպետը խախտեր օրենսգիրքը և գոյություն ունեյր արդյո՞ք նրա մեղքը մեղմացնող հանգամանք: Ձեր տեսակետը անպայման հիմնավորեք հենվելով տվյալ աղբյուրի վրա:
- (2) **31.7.** Թույլ էր տալիս արդյո՞ք օրենսգիրքը տարաձայնություն ասպետների միջև և ինչպե՞ս էր լուծվում այդ խնդիրը:
- (2) **31.8.** Ըստ օրենսգրքի տեքստի, ո՞րն էր համարվում ասպետի ամենամեծ հանցանքը և Ձեր կարծիքով, ինչո՞ւ:

Անցնել փաստաթղթի տեքստի [1-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [2-րդ էջին](#)

(2) **31.9.** Ի՞նչ անվամբ են հայտնի հասարակական հարաբերությունները, որոնք արտացոլված են տվյալ փաստաթղթում և փաստաթղթում առկա ո՞ր տեղեկատվության վրա հիմնվելով եք հանգել նման եզրակացության:

(2) **31.10.** Ո՞ր քաղաքում և ո՞ր դարում են ձևավորվել առաջին հոգևոր-ասպետական միաբանությունները:

(3) **31.11.** Ըստ օրենսգրքի, ամբողջությամբ թվարկեք ո՞ւմ նկատմամբ ուժ կիրառելու (վնաս պատճառելու, դատաստան տեսնելու) իրավունք չունեն ասպետը և Ձեր կարծիքով, ինչո՞ւ:

Անցնել փաստաթղթի տեքստի [1-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [2-րդ էջին](#)

Հրահանգ № 32 առաջադրանքի համար:

Ուշադիր կարդացեք ստորև տրված առաջադրանքը և պատասխանեք հարցերին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Բոլոր հարցերին տվեք լիարժեք և սպառիչ պատասխան: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 4:

Առաջադրանք 32: Բանավեճի թեմայի սահմանում

- (1) **32.1.** Ո՞ր կոնկրետ թեման քննարկելիս կկիրառեիք №31 առաջադրանքում տրված պատմական աղբյուրը:
- (1) **32.2.** Դասին քննարկելիք թեմայի կարևորագույն հարցը նախատեսելով, ձևակերպեք բանավեճի թեմայի վերնագիրը:
- (2) **32.3.** Ձևակերպեք երկու այլընտրանքային դիրքորոշում, որոնք կարող են առաջանալ բանավեճի ընթացքում: